

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՆ ԺԱՄԸ  
11:30-ԻՆ ԿԱՅԱՅԱԾ՝ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

---

**քաղ. Երևան  
Մասնակցում էին՝**

|                    |  |
|--------------------|--|
| Ա. Մովսիսյան       | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար   |
| Տ. Դավթյան         | ՀՀ էկոնոմիկայի նախարար   |
| Դ. Սարգսյան        | ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար   |
| Ս. Հարությունյան   | ՀՀ կրթության և գիտության նախարարության<br>գիտության պետական կոմիտեի նախագահ              |
| Կ. Արեյան          | Երևանի քաղաքապետի տեղակալ  |
| Ա. Միրզախանյան     | ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական<br>վարչության պետ                                |
| Ռ. Հարությունյան   | Զարգացման հայկական գործակալության գլխավոր<br>տնօրեն                                      |
| Ս. Միմոնյան        | ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական<br>վարչության գլխավոր մասնագետ                   |
| Գ. Հասարթյան       | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի<br>օրգանական քիմիայի ինստիտուտի տնօրեն              |
| Ս. Աբովյան         | «Տեքնոլոջի Տրանսֆեր» ասոցիացիա» ԻԱՄ-ի խորհրդի<br>նախագահ                                 |
| Կ. Կարապետյան      | «ԴԱԸ» հիմնադրամ, ծրագրի ղեկավար  |
| Հ. Բաբայան         | «Նեյտրոն» գործարանի տնօրեն   |
| Դ. Պետրոսյան       | «Հայաստանի ազգային ազրարային համալսարան»<br>հիմնադրամի պրոռեկտոր-գիտական կենտրոնի տնօրեն |
| Կ. Կարապետյան      | «Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ-ի ավագ փորձագետ   |
| Ֆ. Նախշարյան       | «Գոլոս Արմենիի» թերթի գլխավոր խմբագիր  |
| Ա. Տեր-Մարտիրոսյան | փորձագետ   |

1. ՀՀ վարչապետի 2010 թվականի ապրիլի 7-ի N 230-Ս որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին

-----  
(Ս. Հարությունյան, Տ. Սարգսյան)

**Օրակարգի 1-ին հարցը զեկուցեց ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանը** և նշեց, որ առաջարկվող փոփոխությունը պայմանավորված է՝

1) Գիտատեխնիկական խորհրդի կազմում ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչների ընդգրկվածությամբ.

2) Գիտատեխնիկական խորհրդի նիստերի կազմակերպման ժամկետի երկարաձգմամբ (առաջարկվում է 6 ամիսը մեկ անգամ՝ ներկայիս 3 ամսվա փոխարեն).

3) նոր կետի լրացմամբ, ըստ որի խորհրդի նախագահի հանձնարարությամբ, խորհրդի նիստի օրակարգի հարցերը նախապատրաստելու նպատակով նախնական քննարկումներ կազմակերպելու համար կարող են հրավիրվել խորհրդակցություններ՝ խորհրդի անդամների առնվազն մեկ երկրորդի մասնակցությամբ:

**ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ Ա. Միրզախանյանը** նշեց, որ ներկայացված որոշման նախագծում առկա է տեխնիկական վրիպակ և առաջարկեց ներկայացնել շտկված տարբերակ:

**Քննարկումներից հետո որոշվեց՝** հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանին՝ որոշման նախագծի վերջնական շտկված տարբերակը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:

2. Գիտության արդյունքների առևտրայնացման կենտրոն ստեղծելու վերաբերյալ

-----  
(Մ. Աբովյան, Տ. Սարգսյան)

**Օրակարգի 2-րդ հարցը զեկուցեց «Տեքնոլոջի Տրանսֆեր» ասոցիացիա» ԻԱԱ-ի խորհրդի նախագահ Մ. Աբովյանը** և ներկայացրեց Գիտության արդյունքների առևտրայնացման կենտրոնի ստեղծման մոդելը: Ըստ նախատեսվածի, կենտրոնը պայմանագրային սկզբունքների հիման վրա գործող «առանց պատերի» կառույց է, որը գործելու է հեռակառավարման սկզբունքով: Կենտրոնին ներկայացվող ծրագրերն անցնելու են համակողմանի փորձաքննություններ՝ գիտական և գիտատեխնիկական, առևտրայնացման

ներուծի նախնական գնահատում, տեխնիկական իրագործելիության, շուկայական պահանջ-վածության (մարքեթինգային) ուսումնասիրություն, ծրագրեր ներկայացրած գիտական կազմակերպությունների մասին տեղեկությունների (այդ թվում՝ կադրային) հավաքագրում և ուսումնասիրություն: Այս ամենի շնորհիվ նվազեցվելու են ոչ միայն սկզբնական և գործառնական ծախսերը, այլև ռիսկերը: Փորձաքննություն անցած ծրագրերը ներկայացվելու են շահագրգիռ կազմակերպություններին:

**ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանը** նշեց, որ Գիտության արդյունքների առևտրայնացման կենտրոնի ստեղծման առաջարկը քննարկվել է նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեում: Այդ կապակցությամբ առաջարկեց ստեղծել խորհրդատվական-վերլուծական մեթոդաբանության մի ծրագիր, որը կներառվի կիրառական արդյունքի ձեռքբերման մրցույթում, ապահովել վերջինիս ֆինանսավորումը (կպահանջվի 5-6 մլն դրամ) և մեկ տարի անց անդրադառնալ Գիտության արդյունքների առևտրայնացման կենտրոնի գործունեության արդյունավետության հարցին:

**ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի օրգանական քիմիայի ինստիտուտի տնօրեն Գ. Հասրաթյանը** նշեց, որ Գիտության արդյունքների առևտրայնացման կենտրոնի մոդելն իրատեսական չէ և ենթակա է մանրամասն ուսումնասիրության:

**ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը** նշեց, որ ներկայացված մոդելում հստակ նկարագրված չեն Գիտության արդյունքների առևտրայնացման ֆինանսական կողմը (ֆինանսական միջոցների ներգրավման շղթայի նկարագրությունը): Այսինքն, անհասկանալի են Գիտության արդյունքների առևտրայնացման շարժառիթները և հստակ չեն ռիսկերի պատասխանատուները: Ընդ որում, մոդելում ներկայացված միջազգային կազմակերպությունները չունեն առևտրայնացման շարժառիթ, քանի որ դրանց հիմնական նպատակները բոլորովին այլ են: Այդ կապակցությամբ նա հիշատակեց Միլիկոնյան հովտում ձևավորված միջավայրը, որտեղ հավաքված են աշխարհի լավագույն գաղափարները, նորարարությունները, մասնագետները, և, որոնց հիմնական նպատակը, շարժառիթը շահույթ ստանալն է: Դրանից բացի՝ ներկայացված Գիտության արդյունքների առևտրայնացման կենտրոնը բավականին նման է վենչուրային հիմնադրամի մոդելին, որտեղ ամենահիմնական տարրը՝ պատասխանատու ներդրողը, բացակայում է:

**Քննարկումներից հետո որոշվեց՝** հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանին՝ քննար-

կել Գիտության արդյունքների առևտրայնացման կենտրոնի ստեղծման նպատակահարմարության հարցը և անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություն:

### 3. Բազմաբնակարան շենքերի սեյսմիկ կայունությունն ապահովելու հարցի շուրջ

(Կ. Արեյան, Տ. Սարգսյան)

**Օրակարգի 3-րդ հարցը զեկուցեց Երևանի քաղաքապետի տեղակալ Կ. Արեյանը** և զեկուցեց, որ՝

1) բազմաբնակարան շենքերի սեյսմիկ կայունության ապահովման նպատակով կատարվել է ուսումնասիրություն: Արդյունքում բազմաբնակարան շենքերի սեյսմիկ կայունությունը հնարավոր կլինի ապահովել տանիքների, ձեղնահարկերի օգտագործման միջոցով, որոնք սակայն ՀՀ օրենսդրությամբ համարվում են բաժնային սեփականություն: Բաժնային սեփականության կառավարման, տնօրինման և օգտագործման սկզբունքներն ամրագրված են «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածում, ինչը ենթադրում է, որ ցանկացած միջամտության դեպքում պահանջվելու է բաժնային սեփականատերերի 2/3-ի համաձայնությունը:

2) բազմաբնակարան շենքերի սեյսմիկ կայունության ապահովման գծով ֆինանսական միջոցների ներգրավման ուղղությամբ կատարված ուսումնասիրության արդյունքները և ճարտարապետների կողմից ներկայացված եզրակացությունները ցույց են տվել, որ առաջարկվող տարածքները ենթակա են օգտագործման սեյսմակայունության ապահովման համար: Այսինքն, հրապարակային սակարկությունների և մոդելային նախագծի մրցույթի հայտարարման միջոցով կներգրավվեն համապատասխան ներդրողներ: Բազմաբնակարան բնակելի շենքի տանիքում կամ ձեղնահարկում առաջացած նոր տարածքի ձեռք բերման նախապատվությունը կտրվի տվյալ տարածքի տակ բնակվող բնակչին, իսկ իրացման արդյունքում գոյացած ֆինանսական միջոցները կուղղվեն շրջանառու ֆոնդ:

Այնուհետև անդրադառնալով օրենսդրական խոչընդոտներին՝ առաջարկեց «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություն՝ ընդհանուր բաժնային սեփականության տարածքները՝ տանիքներն ու ձեղնահարկերը, առանձնացնել՝ տվյալ սեփականության գծով լիազորված անձ ճանաչելով համայնքի ղեկավարին: Օրենսդրական խոչընդոտների վերացման հարցը քննարկվել է նաև ՀՀ տարածքային կառավարման նախարարության և ՀՀ քաղաքաշինության նախարարության համա-

պատասխան ներկայացուցիչների հետ, սակայն չի քննարկվել ՀՀ արդարադատության նախարարության հետ: Այդ կապակցությամբ առաջարկեց ձևավորել իրավական-փորձագիտական աշխատանքային խումբ և քննարկել խնդրի լուծման իրավական կողմերը:

Անդրադառնալով Երևան քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքներում առկա ապօրինի կառուցված վերնահարկերին՝ նշեց, որ ներկայումս իրականացվում է խիստ հսկողություն, որի արդյունքում կասեցված են նմանօրինակ շինությունների կառուցումը և ցանկացած փոփոխություն (պատուհանադուռ, մուտքի դուռ բացելու թույլտվություն) իրականացվում է օրենսդրության պահանջներին համապատասխան:

Դրանից բացի՝ Երևանի քաղաքապետի տեղակալ Կ. Արեյանը զեկուցեց նաև 2013 թվականի հունվարի 31-ին կայացած Մշտապես գործող տարածքային զարգացման և բնապահպանական նախարարական կոմիտեի նիստում տրված հանձնարարականը: Այդ կապակցությամբ նա նշեց, որ «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» ՀՀ օրենքն ամբողջությամբ համապատասխանում է ԵՄ-ի չափանիշներին: Ինչ վերաբերում է վերահսկողության մեխանիզմներին, ապա բազմաբնակարանային բնակելի շենքի կառավարիչը բյուջեի ներկայացման մասով հաշվետու է բացառապես բաժնային սեփականատերերին:

**ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը** նշեց, որ բազմաբնակարան շենքերի սեյսմիկ կայունության ապահովման իրավական կարգավորման արդյունքում, առկա մասնագիտական եզրակացության դեպքում, համապատասխան աշխատանքներ կատարելու համար բաժնային սեփականատերերի 2/3-ի կարծիքը չպետք է հաշվի առնվի:

**Քննարկումներից հետո որոշվեց՝** հանձնարարել ՀՀ արդարադատության նախարար Հ. Թովմասյանին՝

1) բազմաբնակարան շենքերի վթարայնության, սեյսմակայունության ապահովման հետ կապված իրավական հարցերը քննարկելու նպատակով ձևավորել աշխատանքային խումբ՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության, Երևանի քաղաքապետարանի և ՀՀ տարածքային կառավարման նախարարության համապատասխան մասնագետների մասնակցությամբ.

2) աշխատանքային խմբում քննարկել նաև անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները և ըստ այդմ ՀՀ կառավարություն ներկայացնել համապատասխան առաջարկություն:

4. Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին քիմիայի զարգացման ծրագրի «Հանրապետության քիմիական արտադրության հզորությունների գույքագրում, առկա ռեսուրսների և գիտատեխնիկական ներուժի գնահատում» զեկույցը

(Ս. Հարությունյան, Տ. Սարգսյան)

**Օրակարգի 4-րդ հարցը զեկույցեց ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանը** և նշեց, որ ՀՀ կառավարության 2012 թվականի մայիսի 24-ի N 20 արձանագրային որոշման N 2 հավելվածով նախատեսվում է ՀՀ քիմիական արտադրության հզորությունների գույքագրում, առկա ռեսուրսների և գիտատեխնիկական ներուժի գնահատում: Այդ նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ համապատասխան նախարարությունների, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Երևանի պետական համալսարանի և Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի ներկայացուցիչների մասնակցությամբ: Հայաստանի Հանրապետությունում քիմիայի ոլորտում բարձրագույն կրթությամբ կադրեր են պատրաստում Երևանի պետական համալսարանը, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանը, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը: Մասնագիտացված ամբիոնները 11-ն են, աշխատում է 21 պրոֆեսոր, 66 դոցենտ, 22 ասիստենտ և այլն: Յուրաքանչյուր տարի պատրաստվում են՝

1) շուրջ 30 մագիստրոսներ և 100 բակալավրներ՝ «Քիմիա», «Դեղագործական քիմիա», «Էկոլոգիական քիմիա» մասնագիտությունների գծով.

2) շուրջ 25 ճարտարագետ-մագիստրոսներ՝ «Քիմիական տեխնոլոգիաներ», «Կենսատեխնոլոգիա», «Շրջակա միջավայրի պաշտպանություն (քիմիական արդյունաբերության ճյուղում)» մասնագիտությունների գծով, շուրջ 100 ճարտարագետ-բակալավրներ՝ նշված և «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (քիմիական արդյունաբերության ճյուղում)» մասնագիտությունների գծով և շուրջ 10 կրտսեր մասնագետներ՝ «Քիմիական միացությունների որակի անալիտիկ հսկում» մասնագիտության գծով.

3) 5 դիպլոմավորված մասնագետներ՝ «Դեղագիտություն» մասնագիտությամբ.

4) շուրջ 25 ուսուցիչ-մագիստրոսներ և 65 ուսուցիչ- բակալավրներ:

Ներկայումս գործում է հետևյալ գիտահետազոտական ինստիտուտները՝

1) «Ա. Բ. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ-ը՝ 7 լաբորատորիա, 1 բաժին, 1 խումբ.

2) «Մ. Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿ-ը՝ 13 լաբորատորիա, 3 բաժին, 2 խումբ.

3) «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ-ը, որն ընդգրկում է Լ. Մնջոյանի անվան Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը, Օրգանական քիմիայի ինստիտուտը և Մոլեկուլի կառուցվածքի ուսումնասիրությունների կենտրոնը՝ ընդհանուր առմամբ՝ 26 լաբորատորիա, 5 խումբ.

4) «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ-ի սպիմետրիկ սինթեզի լաբորատորիան.

5) ՀՀ էկոնոմիկայի ենթակայությամբ գործող «Պլաստպոլիմեր ԳՀԻ» ՓԲԸ-ն.

6) նախկին «Նյութաբանություն» ԳԱԶ ՓԲԸ-ն.

7) «Արիակ» կիրառական քիմիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն:

2012 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի շրջանակներում քիմիայի տարբեր բնագավառներում հետազոտություններ իրականացնելու համար բազային ֆինանսավորում են ստանում գիտական 4 կազմակերպություններ՝ ավելի քան 400000 հազ. դրամ:

2007-2011 թվականների ընթացքում քիմիայի բնագավառում ՀՀ գիտնականների հեղինակությամբ կամ համահեղինակությամբ «Thomson Reuters» գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված ամսագրերում հրատարակվել են 400-ից ավելի գիտական աշխատություններ, իսկ 2012 թվականի անցած ամիսների ընթացքում՝ արդեն 45-ից ավելի:

Մինչև 5 տարվա վաղեմություն ունի գիտական սարքավորումների շուրջ 23 տոկոսը, համապատասխանաբար՝ սարքավորումների 67 տոկոսը 5 տարուց ավելի հին է:

Գիտատար արտադրանք են արտահանում հետևյալ գիտական կազմակերպությունները՝

1) «Ա. Բ. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ-ը.

2) «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ-ը.

3) «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ-ը.

4) «Պլաստպոլիմեր ԳՀԻ» ՓԲԸ-ն.

5) նախկին «Նյութաբանություն» ԳԱԶ ՓԲԸ-ն.

6) «Արիակ» կիրառական քիմիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն:

Անդրադարձավ նաև փոքր և միջին քիմիայի ոլորտի զարգացմանը խոչընդոտող հետևյալ հանգամանքներին՝

1) ՀՀ ձեռնարկությունների կողմից պատվերների բացակայությունը.

2) արտադրական տարածքների, արտադրական հզորությունների, հիմնական միջոցների և ենթակառուցվածքների մաշվածությունը.

3) ՀՀ տնտեսության ճյուղերի, մասնավորապես՝ լեռնահանքային, գյուղմթերքների վերամշակման, սննդի և տեքստիլ արդյունաբերության և այլն, միջև կոռպորացիայի բացակայությունը.

4) Ներդրումային (վենչուրային) հիմնադրամի, առհասարակ՝ ներդրողների բացակայությունը.

5) միջնակարգ մասնագիտական կրթությամբ մասնագետների տեխնոլոգների, անալիտիկների, արհեստավարժ միջին տեխնիկական անձնակազմի պատրաստման համակարգի բացակայությունը.

6) միջազգային չափանիշներին համապատասխան սերտիֆիկացման համակարգի բացակայությունը:

Առկա խնդիրների լուծման նպատակով առաջարկեց՝

1) գիտական արդյունքի առևտրայնացմանն աջակցության ծրագրերի ընդլայնում, մասնավորապես՝ համաֆինանսավորման սկզբունքով կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված ծրագրի ֆինանսական ծավալների ավելացում.

2) գիտական կազմակերպությունների ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի իրականացում, այդ թվում՝ համատեղ օգտագործման գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերմանն աջակցություն.

3) ոլորտի զարգացման համար անհրաժեշտ մասնագետների պատրաստման համակարգի կատարելագործում.

4) մասնագիտացված կազմակերպությունների կողմից բիզնես-պլանների մշակման հարցում աջակցություն՝ ներդրողներ և վարկային միջոցներ ներգրավելու համար.

5) «Պետություն-մասնավոր հատված» համագործակցության շրջանակներում ինովացիոն ձեռնարկությունների ստեղծում.



6) գիտատեխնոլոգիական ոլորտում հատկապես սկսնակ ձեռնարկատիրական գործունեության զարգացմանն աջակցություն՝ նպաստավոր հարկային, մաքսային քաղաքականության իրականացման միջոցով.

7) Հայաստանում, ԱՊՀ և ԵՄ-ի երկրներում իրականացվող ինովացիոն ծրագրերին ներգրավմանն աջակցություն.

8) աջակցություն՝ միջազգային շուկա դուրս գալուն:

**ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը** նշեց, որ Հայաստանում փոքր և միջին քիմիայի ոլորտը զարգացնելու նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել Հայաստանի հարաբերական առավելությունները: Ըստ էության բացակայում է Հայաստանի մրցակցային առավելությունների մասին վերլուծությունը: Այդ նպատակով դեղագործության ու բիոտեխնոլոգիաների ոլորտում ոլորտում «Ի-Վի քոնսալթինգ» խորհրդատվական ընկերության կողմից իրականացվել է ուսումնասիրություն և վերլուծություն: Արդյունքում ՀՀ կառավարության կողմից հաստատվել է Դեղագործության ու բիոտեխնոլոգիաների ոլորտի զարգացման ծրագիրը: Հաստատված ծրագրի ներքո պետական անմիջական օժանդակություն է տրամադրվել 4 ձեռնարկության, որոնք ավելացրել են արտադրական հզորությունները, կրկնապատկել արտահանման ծավալները: Ինչ վերաբերում է կենցաղային քիմիայի ոլորտին, ապա սովյալ ոլորտի վերլուծություն չի իրականացվել

#### **Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) ընդունել ի գիտություն ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանի զեկույցը.

2) հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանին՝ «Ի-Վի քոնսալթինգ» խորհրդատվական ընկերության տնօրեն Ս. Հերզնյանի հետ համատեղ քննարկել Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին քիմիայի զարգացման հնարավոր ուղղությունները և արդյունքները ներկայացնել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին:

5. «Նյութաբանության գիտահետազոտական և արտադրական ձեռնարկություն» ՓԲԸ-ի զարգացման ծրագրի մասին

-----  
(Տ.Դավթյան, Ս. Սարգսյան)

**Օրակարգի 5-րդ հարցը զեկույցեց ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանը** և նկատեց, որ «Նյութաբանության գիտահետազոտական և արտադրական ձեռնարկություն» ՓԲԸ-ն գործում է բավականին արդյունավետ: Հիմնականում ներգրավված են դրամաշնորհային

միջոցներ: Վերջինիս կողմից մշակված հասուն կնշանակության նոր ապակիներ, կերամիկական և կոմպոզիցիոն նյութեր արտադրվում և առաքվում են ՌԴ-ի ավիացիոն և տիեզերական, էլեկտրոնային, էլեկտրատեխնիկական արդյունաբերության ձեռնարկություններ (տարեկան մոտավորապես 1.0 մլն ԱՄՆ-ի դոլարի չափով):

**«Տեքնոլոջի Տրանսֆեր» ասոցիացիա» ԻԱՄ-ի խորհրդի նախագահ Մ. Աբովյանը** նշեց, որ «Նյութաբանության գիտահետազոտական և արտադրական ձեռնարկություն» ՓԲԸ-ի արտադրանքներից տիեզերական տեխնիկայի համար ապակեբյուրեղային կոմպոզիցիոն գոդիչ փոշու գնորդը «Ռոսկոսմոս» ընկերությունն է: Ընդ որում, Հայաստանը չունի Նյութաբանության ԳՀԻ, այդ իսկ պատճառով կարևորեց նման կառույցի ստեղծումը՝ որպես հայկական ապրանքանիշ:

**ՀՀ էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանն** առաջարկեց կառույցի ստեղծման գործընթացում ներգրավել նաև «Պլաստպոլիմեր ԳՀԻ» ՓԲԸ-ն:

**ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն** առաջարկեց՝

1) հարցը քննարկել «Նյութաբանության գիտահետազոտական և արտադրական ձեռնարկություն» ՓԲԸ-ի ներկայացուցիչների հետ և այնուհետև կայացնել համապատասխան որոշում:

2) «Նյութաբանության գիտահետազոտական և արտադրական ձեռնարկություն» ՓԲԸ-ի հարցը դիտարկել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ինտեգրացման գործընթացի ներքո:

**Քննարկումներից հետո որոշվեց՝** հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանին «Նյութաբանության գիտահետազոտական և արտադրական ձեռնարկություն» ՓԲԸ-ի հարցը դիտարկել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ինտեգրացման գործընթացի ներքո՝ քննարկելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ, և ըստ այդմ ներկայացնել առաջարկություններ:

6. Ընթացիկ հարցեր

-----  
(Ս. Հարությունյան, Ս. Սարգսյան)

**Օրակարգի 6-րդ հարցով ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանը** և առաջարկեց որպեսզի կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված նախագծերի մրցույթի արդյունքում հատված 10 ծրագրերը

բավականին գրավիչ են: Ուստի, նպատակահարմար համարեց այդ ծրագրերը ներկայացնել ՀՀ կառավարություն՝ ներքին սպառման համար կամ ներկայացնել միջազգային շուկա՝ վաճառքի:

**Քննարկումներից հետո որոշվեց՝** հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանին՝

1) կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված նախագծերի մրցույթի արդյունքում հաղթած ծրագրերի հակիրճ հաշվետվությունները ներկայացնել շահագրգիռ ՀԳՄ-ներին՝ պետական պատվեր ստանալու ակնկալիքով.

2) նախքան մրցույթ հայտարարելը՝ հաշվետվությունների արդյունքներն ամփոփել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մոտ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ